ՀԲԱՀ-ներ

Հրազենային բռնության արգելման հրամաններ (GVRO)

Ո՞վ կարող է պահանջել ՀԲԱՀ

- ☐ Ընտանիքի անդամները
- ☐ Տան անդամները, սենյակակիցները
- ☐ Որոշ գործատուներ, գործընկերներ, ուսուցիչներ, դպրոցի աշխատակիցներ
- ☐ Մարդիկ, ովքեր ռոմանտիկ հարաբերություններում են
- ☐ Մարդիկ, ովքեր միասին երեխա ունեն
- ☐ Իրավապահ մարմինները

Ինչու՞ ինչ-որ մեկին կարող է անհրաժեշտ լինել ՀԲԱՀ

ՀԲԱՀ-ը կարող է օգտակար լինել, եթե անձը ճգնաժամի մեջ է և նշաններ է ցույց տալիս, որ կարող է վնասել իրեն կամ ուրիշներին: Մարդը, ում հասանելի են զենքեր, մեծացնում է իր և ուրիշների մահվան և վիրավորվելու վտանգը:

Ի՞նչ է անում ՀԲԱՀ-ը

- Հեռացնում է հրազենը/զինամթերքը այն անձից, որը վտանգ է ներկայացնում իր կամ ուրիշների համար:
- Ժամանակ է տալիս, որպեսզի պատասխանողն աջակցություն փնտրի:
- Ժամանակ է տալիս իրավապահ մարմիններին, որպեսզի 1-ից 5 տարի ժամկետով արգելման հրաման ձեռք բերեն:

ՀԲԱՀ-ների տեսակները

- **Պաշտպանող շտապ ՀԲԱՀ-ներ** կարող են ձեռք բերել միայն իրավապահ մարմինները:
- **Ժամանակավոր ՀԲԱՀ-ի** դիմում կարելի է ներկայացնել ինքնուրույն ՝ լրացնելով և հանձնելով բոլոր պահանջվող դատական ձևաթղթերը: Ձևաթղթերն անվճար են և հասանելի են առցանց և Լոս Անջելեսի Շրջանի ցանկացած Գերագույն դատարանում:
- ՀԲԱՀ-ը ժամանակավոր է՝ մինչև դատավորը հրաման կտա որոշակի ժամանակահատվածի համար:

Ի՞նչ է ՀԲԱՀ-ը

Հրազենային բռնության արգելման հրամանը (ՀԲԱՀ՝ GVRO) կարող է արգելել որևէ մեկին պահել, ունենալ կամ գնել հրազեն (ատրճանակներ), հրազենի մասեր, զինամթերք կամ պահեստատուփ:

ՀԲԱՀ կարող են ձեռք բերել ոստիկանները, ընտանիքի անդամները, զուգընկերները, միևնույն տանն ապրողները, գործատուները, գործընկերները և դպրոցի պաշտոնյաները:

ՀԲԱՀ-ը զենքը և/կամ զինամթերքը հեռացնում է 21 օրով և մինչև 5 տարի ժամկետով այն անձանցից, ովքեր իրենց կամ ուրիշներին վնասելու վտանգի տակ են:

Ինչպես ձեռք բերել ՀԲԱՀ

1 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ դեպքում խնդրում ենք զանգահարել 911: Միայն իրավապահ մարմինները կարող են ձեռք բերել Շտապ պաշտպանության ՀԲԱՀ:

2 Ժամանակավոր ՀԲԱՀ-ի համար, և եթե ձեզ հարմար է, այցելեք ձեր տեղական ոստիկանական բաժին կամ Լոս Անջելեսի Շրջանի Գերագույն դատարան՝ https://www.lacourt.org/courthouse

3 Օգնությունը հասանելի է նաև այստեղ՝

- Իրավաբանական օգնություն՝ https://lafla.org/
- Կալիֆորնիայի դատարաններ. ինքնօգնության ուղեցույց՝ https://selfhelp.courts.ca.gov/GV-restraining-order

ՀԲԱՀ-ների հարցում կողմնորոշվելու աջակցության կարի՞ք ունեք: Բռնությունների կանխարգելման գրասենյակն այստեղ է օգնելու համար:

Ծանոթացեք Բռնությունների կանխարգելման գրասենյակի ՀԲԱՀ-ի ուղեցույցներին՝

ovp_gvro@ph.lacounty.gov

833.540.0473

Համապատասխան գործիքները գտեք այստեղ՝ LACountyGVRO.org
(Armenian)

LOS ANGELES COUNTY OVP OFFICE OF VIOLENCE PREVENTION

COUNTY OF LOS ANGELES Public Health